

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՈՒՆՏԱՆՏԻՆՆԵԱՆ ՑԵՎ ԲՐՈՒԿՍԿԱՅԻՆ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՄԵՆԹԱՑՆԵՐ

Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ

ՇՐՋԱՆԱԾԻՆ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐԻՆ

ԿԱԶՄԵՑ՝ Բ. Մ. ԼՆՅԱՊՈՆ



Հ Կ (Ք) Կ ԿԵՆՏՐԱԼԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ
«ԿՈՒՆՏԱՆՏԻՆՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

07.02

ԵՄ
38034

16591
A

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

Յերկրորդ տարին և, ինչ գոյություն ունեն կոր-
տնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբա-
գիրների հեռակա դասընթացները: Այդ ժամանակամի-
ջոցում շատ շրջանային թերթերի խմբագրություն-
ներ ստորին մասուլի խմբագիրների ուսուցման կա-
պակցութեամբ խոշոր ու հետաքրքիր աշխատանք են
կատարել և հարուստ փորձ կուտակել: Այդ մեզ հնա-
րավորություն և տալիս խմբագրություններին (մա-
նավանդ նրանց, վորոնք առաջին անգամն են
սկսում ուսուցումը) նախազգուշացնելու ինչպես կադ-
մակերպչական, այնպես էլ մեթոդական կարգի ամե-
նատիպիկ սխալներից:

Փորձը ցույց և տալիս, վոր ամենից լավ և պա-
րապմունքներն սկսել հետևյալ ձևով. առաջին կոն-
սուլտացիային՝ պատմել ուսուցման խնդիրների մա-
սին: Այնուհետև պետք և պատմել առաջին դասախո-
սության հիմնական հարցերի մասին, բացատրել դա-
սախոսության առանձին հանգույցային տեղերը և
ունկնդիրներին գործնական առաջադրանք տալ յերկ-
րորդ կոնսուլտացիայի համար:

ՀԵՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԳԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Հետագա բոլոր կոնսուլտացիաները պետք է սկսել ստուգումով, թե հեռակալողներն ինչպես են յուրացրել դասախոսության նյութը, իսկ վերջում, մի 20—30 բուսեյի ընթացքում համառոտակի պիտի պատմել հետևյալ առաջադրանքի մասին:

Այս ուսումնական տարում ուսուցման ժամկետը յերկարացվում է և ծրագիրը բավական ընդարձակվում: Ծրագիրն այժմ կազմված է այն հաշվով, վոր պարապմունքը 1936 թվի նոյեմբերից տեի մինչև 1937 թվի դեկտեմբերը:

Փոփոխվում է նաև դասախոսությունների հետևողականությունը: Ընդհանուր հարցերին նվիրված դասախոսությունները պետք է հաջորդեն խոշոր գործնական աշխատանք պահանջող դասախոսություններին, վորպեսզի հեռակալողները թերթի աշխատանքի վորոշ պրակտիկ փորձ ձեռք բերեն: Այնպիսի դասախոսությունները, ինչպիսիք են՝ «Թղթակցության ուղղումը», «Թերթի տեխնիկական ձևավորումը», «Ինչպես գրել թղթակցությունը» և այլն, անցյալ տարի զցված ելին դասընթացների վերջը, մինչդեռ այս հարցերին նվիրված պարապմունքներն անհետաձգելիորեն հարկավոր են հեռակալողներին: Դրա համար ել այս տարի հետևյալ դասախոսություն-առաջադրանքներն են ուղարկվելու՝ ստորև նշված հաջորդականությամբ:

1-ին առաջադրութիւն

ՔՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԵՆՔ

Դասախոսութիւնը հեռակայողներին կծանոթացնի, թե ինչ են ասել Լենինն ու Ստալինը բոլշևիկյան մամուլի մասին. նրա կուսակցականութեան մասին, այն մասին, թե թերթն ինչպիսի կուլեկտիվ պրոպագանդիստ, ազխատար ու կազմակերպիչ է, այն խնդիրները մասին, վոր դրված են մամուլի առաջ սոցիալ-լիստական շինարարութեան ներկա շրջանում:

2-րդ առաջադրութիւն

ԿՈՒՏՆՏԵՍՍՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԻԱՏԱՆՔԸ

Դասախոսութիւնը նշում է պաշտպանութեան այն աշխատանքները, վորոնց համար ամենորոյա պայքար պիտի մղի պատի թերթը և պատմում է լաւագույն պատի թերթերի վորձը: Դասախոսութիւնը կոզնի պատի թերթում ճշտորեն լուսաբանելու կողմնակցութեան պաշտպանութեան աշխատանքի հարցերը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ

Դասախոսությունը կսկսամի Խորհուրդների Համախուժեանական Ց-րդ արտակարգ համադումարի արդյունքների մասին: Նա հեռակայողներին կոզնի ուսումնասիրելու ստալինյան Սահմանադրությունը և ընկեր Ստալինի զեկուցումը: Դասախոսությունը կոնկրետ որինակներով ցույց կտա, թե պատի թերթն ու նրա խմբագիրն ինչպես պիտի աշխատեն նոր Սահմանադրության պայմաններում:

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոսությունը վերլուծման կենթարկի մի քանի պատի թերթ՝ «ընդհանուր» բնույթ կրող ընդարձակ հոդվածներով. վորոնք պայծառորեն չեն արտացոլում կոլտնտեսության կյանքը, չեն կարողանում կազմակերպել իրենց ընթերցողներին, ապա հեռակայողներին մանրամասն կրացատրի, թե ինչ հարցերով և ինչպես պիտի զբաղվի կոլտնտեսային պատի թերթը:

Այդ դասախոսության մեջ կխոսվի կուսակցական թեմաներին վերաբերող նյութի կազմակերպման մա-

սին, ստախանովյան շարժման հարցերի լուսաբանման մասին, կոլանտեսային կենցաղի ու կուլտուրայի, և վերջապես պատի թերթում ինֆորմացիա տալու հարցերի մասին:

Դասախոսությունը հեռակայողներին հետաքրքիր թեմաներ կ'ընչի պատի թերթի աշխատանքի պլանի մեջ մտցնելու համար:

Տ-ԲԳ ԽՈՒԱԳՈՒԳՐՈՒՅՈՒՄ

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՆ ՈՒ ԿՈԼՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏԵՍԵՄԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍԻՆ

Այս դասախոսությունը կպատմի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի նշանակության ու խնդիրների մասին, վոր զուգադիպելույն խորհրդային իշխանության հաղթանակի 20-ամյակին: Ցուցահանդեսին եքսպոնատներ ներկայացնելու թեկնածու առաջավոր կոլանտեսությունների որինակով ցույց կտրվի ցուցահանդեսի նշանակությունը: Վորպես սոցիալիստական գյուղատնտեսության վիթխարի հաղթանակների ստուգատես: Այդ դասախոսության մեջ կպատմվի, թե պատի թերթն ինչպես պետք է աշխատի, վորպեսզի կոլանտեսությանն ոգնի՝ մասնակցել Համամիութենական ցուցահանդեսին:

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԹՂԹԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս դասախոսութիւնը կախահանջի մի քանի լավ նախապատրաստված կոնսուլտացիա, վորոնց ընթացքում պետք է վերլուծվեն հետազոտողներին դրած թղթակցութիւնները:

Դասախոսութիւնը կպատմի թղթակցութիւններին զանազան տիպերի մասին (մերկացնող, ինֆորմացիոն, փորձի հաղորդում, յերգիծական), կպատմի, թե ինչպէս ընտրել թղթակցութեան նյութը, ինչպէս նյութեր հավաքել թղթակցութեան համար և ստուգել այդ նյութերը, ինչպէս կազմել թղթակցութեան պլանը:

Դասախոսութիւնը մանրամասն կպատմի նաև այն պահանջներին մասին, վոր առաջադրվում են յուրաքանչյուր թղթակցութեանը (կոնկրետութիւն, ճշգրտութիւն, նպատակաձգում, քաղաքական ուղղութիւն և այլն) և հատուկ ցուցումներ կտա թղթակցութեան լեզվի մասին:

Դ-րդ առաջադրութիւն

ԽՄԲԿՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս դասախոսութիւնը հետազոտին պետք է օգնի ճիշտ կազմակերպել պատի թերթի խմբկոլի աշխատանքը: Այն կպատմի, թե ինչպէս կատարել խմբկոլի ընտրութիւնը կոլանտեսականների ժողովում,

ինչպէս պարտականութիւնները բաշխել խմբովի անդամների միջև, ինչպէս կազմել պատի թերթի հերթական համարի սլանը, ինչպէս աշխատանքի պլան կազմել և այլն:

Տ-րդ առաջադրութիւն

ԱՃԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՋ

Այս դասախոսութեան մեջ են մտնում հետևյալ հիմնական գլուխները. Լենինն ու Ստալինը բանգյուղթղթակիցներէ մասին, կուսակցական ղեկավարութիւնը բանգյուղթղթակիցներին, գյուղթղթակիցների շարքերի մաքրութեան համար, գյուղթղթակիցների պաշտպանութիւնը հարածանքներից:

Ծ-րդ առաջադրութիւն

ԹՂԹԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ

Այս դասախոսութիւնը թղթակցութեան ուղղմանը նվիրված՝ մի քանի գործնական պարագմունք կապահանջի: Դասախոսութեան մեջ խոսվում է այն մասին, թե ինչպէս պիտի ուղղել թղթակցութիւնը, վարպետը չազավազվեն հեղինակի լեզուն ու միտքը: Այնտեղ խոսվում է ոտար և անհասկանալի բառերի մասին, կրճատումների, խոսքի, գրասենյակային ձեւերի մասին, պիտանի բառերի ընտրութեան, նախադասութեան մեջ բառերի ճիշտ դասավորման, քաղվածքների ու թվերի ոգտագործման մասին:

Դասախոսութիւնը կառուցված է լինելու կոնկրետ որինակներով:

ՊԱՏԻ ԹԵ՛ԹԻ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Այս դասախոսութիւնը ցույց կտա, Վոր թղթակցութիւններէ գործունութիւնն անմիջականորեն կախած է պատի թերթերի ոպերատիվութիւնից ու հրատապութիւնից, նրանից, թե աչդ թերթերը Վորքան են կարողանում լրջորեն դնել կոլտնտեսականներին հետաքրքրող ու հուզող հարցերը:

Մանրամասն կլուսաբանվի, թե թղթակցութիւններէ գործունութիւնն համար ինչ նշանակութիւն ունի քննադատութիւնն ճիշտ տոնն ու վոճը, նրա կոնկրետութիւնը, ճշմարտութիւնը, համոզիչ լինելը:

Դասախոսութիւնն մեջ հանդամանորեն կքննվի լավագոյն պատի թերթերի վորձը՝ գործունութիւնն համար մղած պայքարում (մշտական բաժին—«թղթակցութիւններէ հետքերով» վերնագրով, թղթակցութիւններէ քննարկում կոլտնտեսականներէ ժողովներում և այլն):

Դասախոսութիւնն մեջ մի հատուկ բաժին էլ նվիրվում է զրական նյութերէ գործունութիւնն համար մղվող պայքարի խնդիրներին (ստախանովականներէ ու հարվածայիններէ վորձի հաղորդում, ոսցիտնալացման առաջարկութիւններէ կենսագործում և այլն):

11-րդ առաջադրույուն

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դասախոսությունը քննության և սունում պատի թերթի ձևավորման գործում յեղած ամենատարածված թերությունները: Միաժամանակ զբաղան որինակներով ցույց և արվում, թե թերթում ինչպես պիտի դասավորել թղթակցությունները, գրել վերնագրերը, ոգտադործել թերթերից ու ժուռնալներից կտրած նկարները և այլն:

12-րդ առաջադրույուն

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ՄԵՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ծանոթանալով այդ դասախոսությանը՝ հետակայքը զազավար կկազմի պատի թերթի մասսայական աշխատանքի ամենահետաքրքիր ձևերի մասին. ինչպես կազմակերպել «Մասխանովյան փորձի տրիբուն», կամպանիա պատի թերթում, աշխատանքն ընթերցողների մեջ (ընթերցողների ժողովներ, զբույցներ, խըմբկովի զոնբաց նխտեր), ինչպես կազմել թերթի մասսայական աշխատանքի պլանը:

ՅԵՐԳԻԾԱՆԲԸ ԿՈՒՏՆՆԵՍԱՅԻՆ ՊԼՏԻ ԹԵՐԹՈՒՄ

Այս դասախոսութիւնը խմբադրին ցույց կտա, թե ինչպիսի ուժեղ զինք և յերգիծանքը և ինչպես փայլուն կերպով ոգտագործում ելին այն Լենինն ու Ստալինը:

Դասախոսութիւնը խմբադիրներին կզուշացնի այն սխալներէ, վոր տարածված են պատի թերթերում (յերգիծանքի աղջատումը, խծբծանքները, բամբասանքները) և դրական որինալներ կրերի, թե ինչպիսի պատի թերթերը հաշոգությամբ ոգտագործում են այնպիսի ձեեր, ինչպիսիք են ծաղրանկարը (կարիկատուրան), յերգիծական բանաստեղծութիւնը, յերգիծական թղթակցութիւնը, ֆելյետոնը և այլն:

ՄԱՄՈՒԼԻ ՈՐԸ ԿՈՒՏՆՆԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այս դասախոսութիւնը նվիրված է լինելու պատի թերթերի խմբիրներին՝ գալիք մամուլի որվա տունակատարության կապակցությամբ, վոր զուգադիպում է «Պրավդա»-ի քսանինգամյակին: Վորպես ոգնութիւն պատի թերթերին ու կորանտեսային կազմակերպութիւններին՝ արվելու յեն ինչպիսի պատմական այնպես ել գործնական նյութեր:

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՍՈՅԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ
XX ՏՈՐԵՒԱՂԻՆ

Այս դասախոսութիւնն ուղարկվելու յի իր ժամանակին և հեռակայողին կոնկրետ ցուցումներ և առջուր, թե ինչպէս նախապատրաստվել ու անցկացնել պատմական մեծ տարեդարձը:

* * *

Ուսուցման ժամանակամիջոցը միայն նրա համար չի յերկարացված, վոր մի քանի նոր դասախոսութիւն և ավելացված: Գլխավոր պատճառն այդ չի Երջանային թերթը, վոր հեռակայողների համար կոնսուլտացիա յե կազմակերպում, պետք է այս ուսուցումը համարի վարպետ պատի քերթերի խմբագիրներին ամենօրյա ուպերաւիզ ղեկավարութուն ցույց տալու մի անգի կոնսուլտանտի խնդիրն ամեննին ել չի սահմանափակվում միայն նրանով, վոր ստուգի, թե հեռակայողն ինչպէս և յուրայրել դասախոսութիւնն նշուի: Գլխավորն այն և, վոր կարգավորվի կոլանտեսութիւններում կանոնավորապէս մարտական ու հետաքրքիր պատի թերթեր լույս ընծայելու գործը, ոգնել հեռակայողներին՝ պատի թերթերի շուրջը գյուղթղթակիցների հաստատուն, ամուր ակտիվ համախմբել:

Սակայն այս պատասխանատու խնդիրն ամենից քիչ կարելի չե լուծել այսպէս կոչված՝ դասախոսու-

Թյան «մշակումով»: Անցյալ տարի մի քանի շրջանա-
յին թերթեր գործը հենց դրանով եւ սահմանավա-
կում եյին: Որինակ, Լենինգրադի մարզի Դեմյանո-
վյան շրջանի «Տրակտոր» թերթը հեռակայողներին
հրավիրել ե շրջանային կենտրոն՝ սեմինար պարապ-
մունքի ե «5 որում,—ինչպես հաղորդում ե խմբա-
գրությունը, — հեռակայողները լիովին մշակել են
ստացած վեց դասախոսությունը՝ պատի թերթերի
աշխատանքի պրակտիկայի ե գյուղատնտեսական ըն-
թացիկ կամպանիաների մասին, յերբորդ առաջա-
դրությունը՝ ուսաց լեզվի վերաբերյալ ե բացի այդ
գրել են ստուգիչ գրավոր աշխատանքներ»:

Այն, ինչ վոր պիտի անեյին մի քանի ամսի
ընթացքում, կատարել են 5 որում: Ի հարկե, այսպի-
սի «ուսուցման» արդյունքները չնչին կլինեն: Յիվ
զարմանալի չե, վոր այդ շրջանում միայն 9 պատի
թերթ կա, վոր ամիսը 3 անգամ լույս են տեսնում-
մյուս պատի թերթերը կամ բոլորովին դադարել են,
կամ շատ ուշ-ուշ են լույս տեսնում:

Մակերեսային ուսուցումը վոչ մի ընդհանուր
բան չունի լրջորեն կադրեր աճեցնելու խնդրի հետ:
Այդպիսի ուսուցումը միմիայն խմբագիրներին վար-
ժեցնում ե վասակար սեզոնայնության՝ պատի թեր-
թերի աշխատանքներում, անցավ յիտուն շրջանը ե—
վերջ, խմբագիրը հանգստացավ, պատի թերթն եւ
դադարեց լույս տեսնել: Իսկ յեթե կոնսուլտացիան
տեղի ունենա սիստեմատիկորեն, ամբողջ տարվա ըն-
թացքում ամեն տասնհինգորյակը մեկ անգամ, այդ

Քամանակ կոնսուլտացիայի ղեկավարը լավ կուսուճչ հասիրե մարդկանց և վոչ միայն հեռակայողներին վորոշ ղիտելիքներ կտա, այլ և կհետևի, թե նրանք ինչպես են ոգտագործում իրենց սովորածը, կողնի նրանց վերացնելու առաջացած դժվարությունները:

Կոնսուլտանտը պետք և կանոնավոր կերպով հետևի, թե հեռակայողներն ինչպես են լույս ընծայում պատի թերթերը և պետք և ընդլծի, վոր անթույլատրելի բան և, յերբ հեռակայող խմբադիրը միայն հաճախում և կոնսուլտացիաներին, իսկ թերթը լույս չի ընծայում:

Փորձը ցույց և տալիս, վոր այն շրջաններում, ուր ուսուցումը սխտեմատիկ ընույթ և ունեցել, պատի թերթերի ցանցն ամրացել և:

Ահա, որինակ, Լենինգրադի մարդի Ոկուլովյան շրջանի «Կրասնիյ Զապոլիի» կոլանտեսությունում հեռակայող Ալեկսեյեվը Հոկտեմբերյան հեղափոխության ՏԼՎ տարեդարձին արդեն լույս և ընծայել իր պատի թերթի այդ տարվա յոթանասունհինգերորդ համարը: 4-5 որը մի անգամ կանոնավոր կերպով լույս տեսնող այդպիսի պատի թերթը ամուր արմատներ և դցել կոլանտեսականների կենցաղի մեջ:

Այդպես ուրեմն. խնդիրն այն և, վոր յեւնելով դասախոսության նյութերից՝ զբույցների ու կոնսուլտացիաների միջոցով, ինչպես և կազմակերպչական ոգնության միջոցով ստեղծել պատի քերքերի պատասխաված իմպագիւրներն մտական կարեւ և խմբկոլների ամենաակտիվ անդամներ:

Այդպիսով ուսուցման ժամանակամիջոցի յերկարացումը մի միջոցառում է, վոր սկզբունքային խոշոր նշանակութուն ունի: Ուսուցման յերկար ժամանակամիջոցը շրջանային թերթերին լայն հնարավորութուններ և առիտ մարտավելու պատթթերթերը:

Հարկավոր է լիովին ոգտագործել այդ հնարավորությունները:

Վորպիսզի հեռակա ուսուցումը հաջող լինի, հարկավոր է հենց սկզբից այն ընթանա հաստատուն սահմանված ծրագրով:

Ապա, անհրաժեշտ է իր ժամանակին հեռակայողներին բաժանել ստացված դասախոսությունները: Այդ պետք է անել անմիջապես, դասախոսությունն ատանալուն պես, չթողնել, վոր այն մի քանի որ ել պառկած մնա խմբագրատանը, պարապմունքները պետք է սկսել ճիշտ վորոշված ժամին, պարապմունքների համար պետք է լավ շենք ապահովել և այլն:

Այն սենյակում, ուր կոնսուլտացիան է տեղի ունենալու, պետք է անպայման կախել կոլանտեսությունների պատի թերթերի վերջին համարները, ունենալ մամուլի հարցերին վերաբերող ժուռնալներ գրքեր:

Ղևկավարը պետք է հող տանի, վոր այդտեղ լինի գրատախտակ, կավիճ, վոր ընդմիջումները ճիշտ հաջորդեն իրար:

Վոմանք այս ամենը «մանրուք» են համարում և հաճախակի թերագնահատում են: Մինչդեռ ուսուց-

ման հաստատուն դիսցիպլինան ու պարապմունքները
ժամանակ կարգ ու կանոնը զգալի չափով կրթ. բճրաց-
նի հեռակա ուսուցման արդյունավետութունը:

ՄՈՎՈՐԵՑՆԵԼ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ

Հեռակա ուսուցման օրդյունքն այն պիտի լի-
նի, վոր պատի թերթերի խմբագիրները հատուկ դի-
տակիքներ ու փորձ ձեռք բերեն: Սակայն կոնսուլտա-
ցիայի ղեկավարը վոչ մի բույն չպիտի մոռանա ըն-
կեր Ստալինի այն խոսքերը, թե «բանվարական ու
գյուղական բրբախիցեներին ժուռեախոսիկայի սեխնիկա-
յի վորո՞ւ մինիմում սախեցեցեք, ի հարկե, անհրաժեշտ
է: Սակայն հիմնականն այդ չի: Հիմնականն այն է, վոր
բանվարական ու գյուղական բրբախիցեներն իրենց ա-
խասանիքը բնապիտում սախերն չեմ իրենց մեջ մեակեն
ժուռեախոս-հասարակական ախասուղի այն հասաու-
րյունը, առանց վորի բրբախիցը չի կարող կասարել իր
միսխան չեմ վորք չի կարող պասվասովի ունուցման
վորեվն արհեստական մեքողմ, այդ բառի սեխնիկական
իմաստով» («Ռարոչի կորեսպոնդենտ» ժուռնալի աշ-
խատակցի հետ ընկեր Ստալինի ունեցած զրույցից-
ապված և «Ռարոչի-Կրեստյանսկի կորեսպոնդենտ»
ժուռնալի 1924 թվի № 6-ում):

Պարապմունքները պետք է խորապես համակված
լինեն կուսակցականությամբ: Կոնսուլտացիան պետք
է դարձնել պատի թերթերի խմբագիրներին լուրջ,
բողիկյան դաստիարակության դպրոց: Իրա համար



եւ յերբէք չի կարելի թույլ տալ, վոր ուսուցումը հանգի միմիայն հեռակա դասընթացների ծրագիրը ձեռկանորեն անցնելուն: Հարկավոր և շրջանի կողմնտեսութ՝յունների կյանքից վերցրած կոնկրետ որինակներով հեռակա յոգներին դաստիարակել բոլբակկյան սկզբունքայնութ՝յան վողովներչնչել նրանց անհաշտութ՝յուն դեպի խորթ հայացքները, սրութ՝յուն, դժայնութ՝յուն: Հարկավոր և խմբագիրներին սովորեցնել, վոր նրանք կարողանան խորապես քննադատել թերութ՝յունները և կարողանան տեսնել մեր սքանչելի կյանքը, հարկավոր և սովորեցնել գրել լավ մասին, այն նորի մասին, վոր կա արտադրութ՝յան մեջ, հասարակական կյանքում, կենցաղում, մերկացնել կողմնտեսութ՝յան շինարարութ՝յան թշնամիներին: Հարկավոր և խմբագրի մեջ սեր սանդնել դեպի իր կոլանտեսութ՝յունը, կոլանտեսային կարգը, սեր՝ դեպի սոցիալիստական հայրենիքը: Հարկավոր և հեռակա յոգների մեջ զարգացնել խոր պատասխանատվութ՝յան գիտակցութ՝յուն՝ թերթի աշխատանքի նկատմամբ:

Այստեղ շատ մեծ և կոնսուլտանտի դերը: Նա պետք և հեռակա յոգին սովորեցնի, թի ինչպես պիտի գնահատել իրեն շրջապատող իրականութ՝յան փատտերը, և այն ինչպես լուսարտնել թերթում: Պետք և այնպես զարգացնել հեռակա յոգի ճաշակը, վոր նա տեսնի նոր թեմաները, նոր, հաճախ պատի թերթի համար դեռ անսովոր հարցերը, դրանով իսկ շարունակ ընդարձակել հեռակա յոգի մտահորիզոնն ու հետաքրքրութ՝յան դաշտը:

Նոր թեման, նոր հարցերը խմբագրի մեջ ցանկութեամբ կառաջացնեն վորև լուրջ հողված կարգալու կենսորոնական թերթում, ժուռնալում, կամ կարգալու վորևս զեղարվեստական յերկ: Յեզ կոնսուլտանտը պետք և կարողանա ժամանակին հանձնարարել նրան անհրաժեշտ գիրքը, պատմել նրա նշանակութեան, նրա բովանդակութեան մասին:

Տարեցտարի ավելի յի աքլում պատի թերթերի խմբագիրների կուլտուրական մտկարդակի բարձրացման խնդիրը: Իրա մասին հոգալը պետք և դառնա կոնսուլտանտի առաջնակարգ պարտականութեանը:

Վերցնենք թերթերի ընթերցումը: Շատ կոնսուլտանտներ նույնիսկ չեն հետաքրքրվում, թե հեռակալողները կարդո՞ւմ են արդո՞ք գոնե շրջանային թերթը: Սակայն, հարց և ծագում, կոնսուլտանտն ինչ կարող և սովորեցնել հեռակալողին, յեթե նախապես այնպես չի անում, վոր հեռակալողները թերթեր գուրս գրեն ու կարողանան կարդալ այն: Պատի թերթի խմբագրին պետք և վարժեցնել, վոր նա կանոնավոր կերպով թերթ կարդա. չն՞ վոր թերթը նոր մտքերի, նոր թեմաների աղբյուր և հանդիսանում պատի թերթում նրա կատարած աշխատանքի համար: Թերթը կարդալով հեռակալողը կարող և մտածել, թե ահա, այսինչ նյութն արժե կտրել ու տեղավորել պատի թերթում, կամ այսինչ դեպքի, այսինչ վորոշման մասին արժե մի նյութ գրել պատի թերթում և այլն:

Ամեն մի պարապմունքի ժամանակ կարելի յե մի տաստասնհինգ բոլոր գտնել և պատմել թերթե-

քի վերջին համարներում տպված այս կամ այն հե-
տաքրքիր նյութի մասին: Կարելի չե վորևե հսկված,
թղթակցություն բարձրաձայն կարգալ և հեռակայող-
ների առաջ հարց դնել, թե նրանք ինչպես կգատեն
այդ նույն թեման պատի թերթում:

Հեռակայողներից շատերի համար կոնսուլտա-
ցիան նրա ուսման միակ ձևն ե: Բոլոր խմբագիրներն
ևլ քաղխմբակների պարտավորություններին չեն հաճա-
կում: Մինչդեռ պատի թերթի խմբագիրը պետք և
ամեն ու տեղյակ լինի ընթացիկ քաղաքական հար-
ցերին, այդ հարցերը պետք և պարզարանել կոնսուլ-
տացիայի ընթացքում: Լինում են այնպիսի քաղա-
քական հարցեր, վորոնց համար կարելի չե նույնիսկ
հետաձգել ծրագրով նախատեսած վորևե թեմայի կոն-
սուլտացիան:

Ահա, որինակ, վերջերս ավարտվեց խորհուրդնե-
րի Համամիութենական Ց-րդ արտակարգ համագու-
ժարը և կոնսուլտանտն անմիջապես պետք և հեռա-
կայողներին ողնի ուսումնասիրել ընկեր Ստալինի ղե-
կուցումն ու ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը: Ճիշտ
այդպես պիտի վարվի նաև կուսակցության
ու կառավարության վորևե կարևոր վորոշման ղեպ-
քում, վորևե աչքի ընկնող ղեպքի մասին տեղեկու-
թյուն ստանալու ղեպքում:

Վարպես կանոն յուրաքանչյուր կոնսուլտացիայի
ժամանակ վարե ժամանակ պիտի հասկացնել բազմա-
կան հարցերի շուրջ զրույց ունենալուն:

Կոնսուլտանտը հեռակայտղների մեջ սեր ու հե-
տաքրքրութիւն պիտի առաջացնի զեպի գեղարվես-
տական գրականութիւնը: Ինչու, որինաչ, կոնսուլ-
տացիայից հետո մի քիչ չմնալ ու կարգալ Պուշկինի
ստեղծագործութիւններից, խոսել նրա մահվան հա-
րչուրամ չակի մասին, կամ մի ուրիշ անգամ խոսել
Ռատրովսկու «Ինչպես եր կոփվում պողպատը» գրքի
մասին, և այլն:

Այսպես ուրեմն. կոնսուլտանտի առաջ խոշոր ու
պատախանատու ինդիւր և գրված: Նա վոչ միայն
պատի թերթի աշխատանքի դասատու յե, այլ և պա-
տի թերթերի խմբագիրների քաղաքական զեկաւարն
և ու դաստիարակը:

Շրջանային թերթերից շատերը, վորոնք անցյալ
տարի պարապմունքներ ևն ունեցել, շատ լավ զգացել
են կոնսուլտանտի գերի լրջութիւնը: Կարելի յե լավ
կոմպլեկտավորել դասընթացը՝ պարապմունքների
հաջողութեան համար ամեն ինչ տալ զյուզթիւթակից-
ներին, բայց և այնպես ուսուցումից շատ բան չի
ստացվի, յեթե կոնսուլտանտի ընտրութիւնն անհա-
ջող և յեզեր:

Եթե կոնսուլտանտը վատն և լինում, հաճա-
խումների ատկոսն անմիջապես իջնում և, հեռակայտղ-
ները հետաքրքրութեամբ չեն լսում նրան:

Միանգամայն բնական և, վոր հեռակա ուսուց-
ման փորձ ունեցող թերթերն այս տարի արդեն հա-
տուկ լրջութեամբ պետք և մոտենան կոնսուլտանտի
ընտրութեան խնդրին: Չի կարելի կոնսուլտացիան

վտանկը քիչ պատրաստութիւնն ունեցող մարդու: Չե-
վոր վերջին հաշիվով կոնսուլտանտի պատրաստութիւ-
նից են կախված ուսուցման վորակին ու նրա ար-
դյունքները:

Մակայն կոնսուլտանտի հոգատար ընտրութիւ-
նով միայն չի լուծվում այդ հարցը: Հեռակայողներին
շնորհալի ու վորակյալ ղեկավարութիւնն ցույց տա-
լու համար պահանջվում և վոչ միայն ընդհանուր
պատրաստութիւնն, այլև վորոշ մեթոդական փորձ,
թեմաների մեթոդական ճիշտ մշակում: Մենք խոր-
հուրդ ենք տալիս խմբագրութիւններին, վորոնք
թեկուզ յերկու կոնսուլտանտ ունեն, յուրաքանչյուր
թեմային անցնելուց առաջ անպայման մեթոդական
խորհրդակցութիւնն ունենալ: Թեկուզ և այդ մտքերի
փոխանակութիւնն լինի, թե ինչպես անցավ նախորդ
պարագմունքը և կոնսուլտանտներն ինչպես են մտա-
ծում անցկացնել հետևյալ պարագմունքը, այդպիսի
խորհրդակցութիւնը մեծ ոգուտ կտա:

ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՍՈՒԼՏԱՅԻԱՅԻՆ

Կոնսուլտացիային պետք և խնամքով նախա-
պատրաստվել:

Վոչ մի դեպքում չի կարելի այսպես դատել, թե
ճիշտախոտութիւնը կազմած և գյուղթղթակցի հա-
մար, իսկ յես առանց այն ել լավ գիտեմ նյութը,
պրա համար ել, բավական և, վոր մի թեթևակի աչքի

անցկացնեմ դասախոսութեանը»։ Ահկալարը պետք է ուշադրութեամբ կարդա իր ստացած ամեն մի դասախոսութեանը և նշի, թե վորոնք են լինելու հանդուցային կետերը կոնսուլտացիայի ժամանակ։

Պարտադիր չե, վոր դասախոսութեան ամբողջ նյութն ողտադործվի զբույցի ժամանակ։ Բազմաթի հարցերով ծանրաբեռնված կոնսուլտացիան դուրս կգա ճապաղ ու մակերեսային։ Հարցերը պետք է ընտրել մտածված, հաշվի առնելով տեղական պայմանները։

Յեթե, որինակ, շրջանում առանձնապես վատ է զբված ստախանովականների փորձի հաղորդումը պատի թերթերի միջոցով, ապա, բնականաբար, այդ հարցին ավելի մեծ ուշադրութեան պիտի դարձնել, քան մյուսներին։

Նշանակում է, զեկալարը լավ պիտի իմանա շրջանի պատի թերթերը, նրանց զբաղան ու բացասական կողմերը։ Պարասլմունքներին նախապատրաստվելիս կոնսուլտանտն իր ձեռքի մակ պիտի ունենա վոչ միայն դասախոսութեանն ու մի շարք գրքեր, այլև հեռակայողներին լույս ընծայած պատի թերթերը։ Գործն աջնպես պիտի դնել, վոր ունկնդիրները պատի թերթերի վերջին համարները բերեն վոչ թե կոնսուլտացիայի ուրը, այլ մի քանի որ առաջ այդ թերթերն ուղարկեն կոնսուլտանտին։

Կոնսուլտանտը պետք է նախորոք մտածի, թե ինչպես պիտի ձևակերպի այն հարցերը, վոր ինքը պիտի տա ունկնդիրներին։ Իսկ այդ շատ կարևոր է։ Հարկավոր է հարցերն այնպես տալ, վոր այդ հարցե-

ըր բարձրացնեն ունկնդիրների հետաքրքրությունն
ու ակտիվությունը:

Միևնույն հարցը մի քանի կերպ կարելի չե ձե-
վակերպել: Որինակ, կարելի չե հարցնել. «Բնչպիսի՞ն
պիտի լինի գյուղթղթակիցը»: Սակայն այսպիսի ընդ-
հանուր հարցը միայն ընդհանուր պատասխան կարող
ե ստանալ: Այդ նույն հարցը կարելի չե տալ ուրիշ
ձևով: Որինակ, նշելով վորեւ կոնկրետ փաստ, որի-
նակ, այս կամ այն գյուղթղթակցի անթուջլատրելի
վարքը, կարելի չե հարցնել՝ արդյոք այդ վարքը հա-
մապատասխանում ե գյուղթղթակցի պատվին ու ար-
ժանապատվությանը, նրա հասարակական գերին ու
գիրքին:

Յերկու հարցերի բովանդակությունն ել նույնն
ե, սակայն հարցի յերկրորդ ձևակերպումը խմբագրին
կտրիպի մտածել, հեռակայողի մեջ ցանկություն կա-
ռաջացնի իր տեսածներից ել կոնկրետ որինակներ
պատմել:

Հարցերը նախապատրաստելուց հետո պետք ե
նշել, թե վոր հեռակայողներին պիտի հանձնարարվի
պարապմունքի ժամանակ յելույթ ունենալ և հաղոր-
դել իր աշխատանքի վորձը: Այդպիսի հաղորդումների
համար պիտի ընտրել այնպիսի թեմաներ, վորոնք
սերտորեն կապված են դասախոսության հետ, որի-
նակ, «Բնչպես յես կաղմեցի պլանը», «Մենք ինչով
ենք զբաղվում խմբիլի նխատրում»: Հասկանալի չե,
գեկավարը լավ պիտի ճանաչի իր ունկնդիրներին,
վորպեսզի ճիշտ բաշխի նրանց յելույթները և վոր-

պեսզի ամենաուժեղներն ու փորձվածներն ողնեն իրեն՝ ըստ հնարավորին լիովին կատարելու պարասյ- մունքի պլանը:

Ղեկավարը յուրաքանչյուր թեմայի մասին լրացուցիչ գրահանուժյուն պիտի կարգաւ: Այդ գրահանուժյունը նրան կոչնի ավելի վստահորեն տանել պարասյմունքը, ավելի հետաքրքիր ձևով դնել հարցերը, ավելի լրիվ ու ճշտորեն պատասխանել հեռակա- յողների կողմից տրված հարցերին:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ուղարկ- ված մեթոդական նամակում նշված կլինի համապա- տասխան գրահանուժյունը:

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ

Կոնսուլտացիան աշխույժ գրույց է: Յուրաքան- չյուր կոնսուլտացիայի պլանը վորոշում է հենց այն դասախոսուժյունը, վոր ուղարկվում է կոնսուլտան- տին: Նրա համար լրացուցիչ նյութ են հասցիւտանում ունկնդիրներին պատի թերթերը:

Ծրագրում նախատեսված բոլոր դասախոսու- թյունները լայն հնարավորություններ են տալիս, վոր ունկնդիրները հետաքրքիր բաներ պատմեն: Ահա, որինակ, «Խմբիլովի աշխատանքը» դասախոսությունը: Յեթե հեռակալողներին ուղղակի հարց տրվի, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է հասկացել կար- դացածը, այդ նրանց մեջ մեծ հետաքրքրություն չի առաջացնի: Բոլորովին այլ պատկեր կստացվի, յեթե

այս ու այն խմբագրին առաջարկվի պատմել, թե նա
ինչպես և կաղմակերպել խմբիկի աշխատանքը: Պետք
և այնպես անել, վոր յուրաքանչյուր յելույթ ունեցող
իր աշխատանքի գնահատականը տա այն ցուցումների
տեսանկյունով, վոր տրված են դասախոսութեան մեջ:

Շատ կարևոր և պատի թերթի խմբագրին վար-
ժեցնել, վոր նա քննադատաբար վերլուծի ինչպես իր,
այնպես եւ ուրիշ խմբագիրների պատի թերթերը:
Դրա համար եւ պարասպմունքների ժամանակ հեռա-
կայողներին լայնորեն մասնակից պիտի անել իրենց
հրատարակած թերթերի քննարկմանը, ի հարկե-
զասախոսութեան հիմնական բովանդակութեան համա-
պատասխան:

Յերբ արդեն մի քանի հեռակայող մի վորոշ
հարցի մասին արտահայտվել են, ղեկավարը ամփո-
փումներ և անում և համառոտակի ձևակերպում յեղ-
բակացութեանը:

Ղեկավարի յեղբակացութեանը պետք և ընդհան-
րացնի ունկնդիրների ասածները: Այդ յուրաքանչյուր
կոնսուլտացիայի պատասխանատու մոմենտն է: Այդ
յեղբակացութեանը հեռակայողների հիշողութեան մեջ
պիտի տպավորի ամենագլխավոր դրույթները: Կոն-
սուլտացիայի ընթացքում խոսքն ինչպիսի կոնկրետ
գործերի եւ վերաբերի, պետք և այնպես անել, վոր
հեռակայողները յուրացնեն բոլշևիկյան մամուլի աշ-
խատանքի հիմնական սկզբունքները:

Կոնսուլտացիայի վերջում պետք և համառոտա-
կի պատմել հետեյալ պարասպմունքի թեմայի մասին:

Նայած թեմայի բնույթին, շրջանի առանձնահատկություններին, ունկնդիրները պատրաստության մակարդակին՝ այս կամ այն պարապմունքի մեթոդն էլ կարող է փոփոխվել: Տեղի պայմանները ղեկավարին կթելադրեն, թե հարկավոր է արդյոք, որինակ, «Աշխատանքը գյուղթղթակիցների մեջ» և «Գյուղթղթակիցների պաշտպանությունը հալածանքից» թեմաների պարապմունքների ժամանակ հրավիրել շրջանային դատախազին (վորպեսզի նա ինֆորմացիա տա, թե շրջանային դատախազությունն ինչպես է պայքարում թղթակիցներին հալածելու դեմ): «Կուսակցական ղեկավարությունը մամուլին» նյութի վերաբերյալ պարապմունքի ժամանակ կարելի չե հրավիրել մի քանի կոլանտեսությունների կուսկազմակերպիչներին և խնդրել, վոր նրանք պատմեն, թե նրանք ինչպես են ղեկավարում պատի թերթերը:

Ինքը՝ կյանքը պարապմունքի շատ հետաքրքիր ձևեր և առաջադրում:

Կոնսուլտանտ Կալուգերը (Ինկարոպետրովսկի մարզի Բ. Տոկմակյան շրջան) գրում է. — «Ձմեռը հին գյուղում և ձմեռը կոլանտեսությունում թեման ուսումնասիրելիս մենք հրավիրեցինք իննսուն տարեկան մի ծերունու, վորը պատմեց, թե առաջ ինքն ինչ էր անում ձմեռը, ինչպես էլ ին ապրում գյուղում, ինչով էլ ին գրադվում ձմեռվա յերկար գիշերները: Կոնսուլտացիոն կետերում լույս ընծայեցինք պատի թերթի հատուկ համար, վորի մեջ տեղավորեցինք հեռակայողների հավաքած ժողովրդական ստեղծագոր-

ծուխՅուհները, նկարներ ֆերմայի աշխատանքներից, խրճիթ-ընթերցարանների, լավագույն ստախանովահանների աշխատանքից, հետաքրքիր տեղեկություններ հավաքեցինք կոլանտեսությունների կյանքից՝ թե ինչ են անում դանազան խմբակները, ինչ պիես ե բեմադրելու դրամիմբակը: Այդ նույն խմբակում կոլանտեսային նկարիչ ինքնուս Վանյա Սիրենկոն պատմեց, թե ինքն իչնպես ե նկարել իր «Չմեռը կոլանտեսությունում» նկարը: Տեղավորեցինք այդ նկարի լուսանկարը, տեղեկություններ հավաքեցինք «պատահարներ» բաժնի համար, մի խոսքով՝ պատրաստեցինք այնպիսի թերթ, ինչպես սովորեցնում ե դասախոսությունը: Այնքան շատ հետաքրքիր նյութ հավաքվեց, վոր, հակառակ մեր ցանկությանը, չկարողացանք բոլորն ել ոգտադործել թերթում: Հեռակայողները համոզվեցին, վոր ձմեռը ես ամառվս նման կարելի յե շատ հետաքրքիր թերթ պատրաստել»

Նույն թեման ուսումնասիրելիս ընկեր Կալուգերը հեռակայողների եքսկուրսիա կադմակերպեց գեպի անասնապահական ֆերման: Անասնարուծն ու ստախանովականները խմբագիրներին շատ հետաքրքիր ու ոգտակար բաներ պատմեցին անասնապահության հաջողությունների մասին: Ֆերմայի աշխատակիցների հետ զրուցելիս հեռակայողները մի անգամ ես համոզվեցին, վոր անասնապահական ֆերման պատի թերթի համար հետաքրքիր թեմաների մի անսպառ ագրյուր ե:

Կոնսուլտանտ Պոչտարյովը գործնականապես ցույց
տվեց հեռակալողներին, թե ինչպես պիտի ընթերցող-
ների ժողովներ կազմակերպել: Վասիլևսկ գյուղում 283
կույսնտեսական հավաքվեցին: Նրանք քննության
առան պս աի թերթի աշխատանքն ու պլանը
և շատ գործնական առաջարկություններ արին:
Շատ շրջանային թերթեր ուսուցման կապակցությամբ
թղթակիցների արշավներ են կազմակերպել՝ ստուգելու
կույսնտեսությունների պս տրաստությունը ցանքին,
և այլն:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲԸ

Յուրաքանչյուր դասախոսությունը նախատե-
սում է, վոր ունկնդիրները վորոշ գործնական աշխա-
տանք կատարեն: Անկազարն իր համար կանոն պիտի
դարձնի, վոր վոչ մի գործնական աշխատանք առանց
ստուգման չթողնի:

Գործնական պարապմունքներն ամեն կերպ պի-
տի բաղմապիսի դարձնել: Չի կարելի գործնական
պարապմունքը միմիայն պատի թերթեր լույս ընծա-
յելը դարձնել: Ոգտակար կլինի հեռակալողներին
հանձնարարել նաև ուրիշ առաջադրություններ, որի-
նակ, մտածել, թե ինչ պիտի գրել տվյալ նկարի
տակ, ընտրել հաջող ծաղրանկար, հետադրտության
համար հարցացուցակ կազմել, թերթի համարի պլան
պատրաստել և այլն: Զպիտք է խորշել նաև այնպի-

սի, առաջին հայացքից «մանրուք» թվացող խնդիր-
ներէից, ինչպիսիք են, որինակ, հեռակալողին սովո-
րեցնել արտագրել, քանոն ու մատիտ գործածել, թեր-
թի համար հաջող ծաղրանկար ընտրել, հարմար
• քաղվածք ջոկել և այլն:

Գործնական աշխատանքների հիմնական մասը
պիտի տալ, վոր հեռակալողները տանը կատարեն:
Բայց, յեթե հնարավոր և կոնսուլտացիան յերկու-յե-
րեք ժամից ավելի շարունակել, այդ դեպքում շատ
ոգտակար կլինի, վոր հեռակալողները վորոշ գործնա-
կան աշխատանքներ կատարեն հենց կոնսուլտանտի
ներկայութեամբ: Հասկանալի չե, վոր գրույցն ու
գործնական աշխատանքը պետք և սերտորեն կապված
լինեն իրար հետ:

Գործնական աշխատանքի առաջադրութեաններին
մասին ևս կոնսուլտանտը նախորոք պետք և լավ մտա-
ծի: Իրա համար պետք և ընտրել կոնկրետ ու հրա-
տապ նյութեր, վորոնք բղխեն այն խնդիրներէից, վո-
րոնց կատարման համար պետք և պայքարի սվյալ
կոլտնտեսութեան պատի թերթը:

Համեմատաբար ավելի լավ պատրաստված հեռա-
կալողներին կարելի չե գործնական աշխատանք տալ
ըջտնային թերթում: Անցյալ տարի այսպիսի աշխա-
տանքի շնորհիվ շատ հեռակալող գյուղթղթակիցներ
առաջ քաշվեցին թերթի խմբագրութեանում աշ-
խատելու:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԸ ՅԵՎ ՀԵՌԱՎԱ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

Շատ շրջանային թերթեր իրենց եջերում պար-
րերարար լուսարանում եյին հեռակա ուսուցման ըն-
թացքը, վորով վորոշ հասարակական կարծիք եյին
ստեղծում ուսուցման շուրջը, բարձրացնում եյին հե-
ռակայողների պատասխանատուության զգացմունքը:
Այդ լավ ե: Սակայն պետք ե նշել, վոր հեռակա ու-
սուցման մասին շատ թերթեր բոլորովին միակողմա-
նի նյութեր եյին տպում: Տպում եյին մեծ մասամբ
կամ հեռակայողների պարտավորությունը, թե կսոցիո-
րեն լավ» ու «գերազանց», կամ նրանց կարծիքները
պարապմունքների մասին:

Ի հարկե, վորոշ չափով հարկավոր ե այդպիսի
նյութ եւ տպել: Սակայն շրջանային թերթը շատ
ավելին կարող ե անել ե միայն այդպիսի թղթակ-
ցություններով սահմանափակվելը ճիշտ չի լինի: Շատ
շրջանային թերթեր համարյա յերրեք մամուլի տե-
սություն չեն տպում պատի թերթերի մասին: Մեր
նայած 100 կոմպլեկտ շրջանային թերթերից միայն
20-ի մեջ կային մամուլի տեսություններ, մինգեռ
այդ, ինչպես հայտնի յե, ստորին մամուլը ղեկավարե-
լու փորձված ձև ե:

Մամուլի տեսությունները խիստ անհրաժեշտ են
նաև խմբագիրների հեռակա ուսուցման շահերի տե-
սակետից: Կոնսուլտացիաներից վնչ բոլոր պատի-
թերթերի խմբագիրներն են կարողանում ոգտվել:

բայց մամուլի տեսութիւնը բոլորն են կարգում: Կարգում են վոչ միայն պատի թերթերի խմբագիրները, այլև կոլտնտեսութեան կուսկազմակերպիչն ու նախագահը: Կարգում եւ՛ գլուղթիլթակիցը, ե՛ շարքային կոլտնտեսականը, վորի համար հետաքրքիր ե իմանալ շրջանային թերթի կարծիքն իրենց կամ հարեան կոլտնտեսութեան պատի թերթի մասին:

Մամուլի տեսութիւններում պետք ե համբերատար ձևով քննել պատի թերթերի թերութիւնները ե մասսայականացնել հաշոգված փորձը. մի խոսքով՝ յուրաքանչյուր տեսութիւնն այնպես պիտի կազմել, վոր նա սովորեցնի խմբագրին: Տեսութիւնների թեմաներն ու նրանց պարբերականութիւնը կարելի յե հիանալի կերպով համապատասխանեցնել կոնսուլտացիաներին: Որինակ, յետե «Թիլթակցութեան գործունութիւնը» նյութին նվիրված կոնսուլտացիայից առաջ շրջանային թերթը մի մանրամասն տեսութիւն տպի այդ նյութի մասին, ապա կոնսուլտացիան կանցնի իր անհրամեշտ բարձրութեամբ:

Պետք ե ախոսանքով ասել ե այն, վոր շրջանային թերթերը պատի թերթերից վերցրած հետաքրքրիր նյութեր չեն արտատպում: Մինչդեռ պատի թերթերից արտատպած թիլթակցութիւնները կարող եյին մի հետաքրքիր բաժին կազմել շրջանային թերթում: Շատովյան շրջանի «Նովի պուտ» թերթն իր հոկտեմբերյան համարում մի ամբողջ եջ ե հատկացրել այդպիսի թիլթակցութիւններին, վարոնք տպել ե «Նոր կյանք» ընդհանուր վերնագրի տակ: Տեղավորե-

յով այդ հետաքրքրական նյութերը՝ դրանով իսկ
թերթը խրախուսում և պատի թերթերի խմբագրե-
ներին, նրանց զբոսում և նորանոր թեմաներ վորոնե:

Թե հեռակայողները վորքան են յուրացրել հեր-
թական գասախոսությունը, այդ բանը զեկավարք
հեշտությամբ կարող և պարզել կոնսուլտացիայի ըն-
թացքում և հեռակայողների կատարած գրանցումները
պարբերաբար նայելով: Սակայն առաջադիմության
գնահատակների հիմնական նյութը պետք և լինի հե-
ռակայողի լույս ընծայած պատի թերթը, նրա գրած
թղթակցությունը: Ամեն մի կոնսուլտացիայի վեր-
ջում կոնսուլտանտը պետք և նշի յուրաքանչյուր հե-
ռակայողի աշխատանքի վորակն առանձին:

Հեռակայողներին պետք և նախազգուշացնել,
վոր մամուլի որվա առթիվ (1937 թ. մայիսի 5)
նրանք պետք և քննություն տան անցած թեմա-
ներին:

Ըստ եյության այդ կլինի պատի թերթի խմբա-
գրի հաշվետվությունը կոլանտեսականներին՝ այն
մասին, թե ինքն ինչպես և սովորել, ինչպես և կա-
րողացել ստացած գիտելիքներն ողտագործել թերթի
խմբագրման գործում:

Այդ առթիվ հատուկ նամակ կուղարկի այդ
ստուգումները կատարելու կարգի մասին:

Կոնսուլտանտը հեռակայողների հառ նենցած
իր առաջին զբույցում պետք և ողտագործի այս մե-
թոդական նամակի նյութը, վորպեսզի հեռակայողնե-

րին պատմի, թե ինչպէս և կազմակերպվելու ուսու-
ցումը, պատմի դասախոսությունների թեմաների մա-
սին, պարապմունքների մեթոդի, գործնական առա-
ջադրությունների և ամբարտական ստուգումների
մասին:

Դյուզհրաաի տպարան, Յերևան.

Դրագիր № 2251,

պատկեր 103,

տիրաժ 200

10743

27

A $\frac{I}{3591}$

ЗАОЧНЫЕ КУРСЫ

редакторов колхозных
и бригадных стенгазет

МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО

Редактору районной газеты
по курсу

«Практика газетной работы»

Составил Б. М. ЛЕЙВЗОН

Издание ЦК КП(б) А «Хорурдаин Айастан»
Ереван—1937 г.